

«ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Եվրասիա միջազգային համալսարան» ոչ պետական առևտրային կազմակերպության կանոնադրության (նոր խմբագրությամբ՝ հաստատված 05.11.2009թ-ի հիմնադիրների խորհրդի և 02.11.2009թ-ի գիտական խորհրդի կողմից) մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝

1. Հիմնադիրների խորհրդի լիազորությունների մեջ 24.2, 24.3 և 24.4 կետերում նշված լիազորությունները տեղափոխել համալսարանի խորհրդի լիազորությունների մեջ:

*Հիմնադիրների լիազորությունները ընթերցել հեևյալ խմբագրությամբ՝*

24 Հիմնադիրների խորհուրդը՝

24.1. ընտրում է համալսարանի ղեկավարին և անհրաժեշտության դեպքում

դադարեցնում է նրա լիազորությունները,

24.2. հաստատում է Համալսարանի ղեկավարի ընտրությունների ընթացակարգը,

24.3. իրականացնում է անշարժ գույքի հետ կապված ցանկացած գործարք:

*Համալսարանի խորհրդի լիազորությունները ընթերցել հեևյալ խմբագրությամբ՝*

ա) ընտրում է նախագահ՝ խորհրդի հերթական նիստերը վարելու և նիստերի միջև ընկած

ժամանակահատվածում խորհրդի նիստերից բխող հանձնարարականների կատարմանը հետևելու համար,

բ) հաստատում է իր աշխատակարգը,

գ) լսում և գնահատում է ղեկավարի հաշվետվությունը համալսարանի տարեկան գործունեության մասին,

դ) քննարկում և հաստատում է համալսարանի կառուցվածքը:

ե) քննարկում և հաստատում է համալսարանի ռազմավարական պլանը,

զ) քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն,

է) սահմանում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ուսման վարձերի չափը, գնդչերը, արտոնությունները,

2. կանոնադրության 25-րդ կետում համալսարանի խորհրդի անդամների թվին վերաբերող վերջին նախատեսությունը հանել :

*25-րդ կետը ընթերցել ի հետևյալ խմբագրությամբ՝*

25. Համալսարանի խորհուրդը կողմից կառավարման մարմին է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ սույն կանոնադրությանը համապատասխան, այդ ընթացքում խորհրդի անդամների մասնակի շոգաժողովում:

3. Կանոնադրության 26-րդ կետում կատարել լրացում և ավելացնել կառավարման մարմինների և գործատուների բառերը:

*26-րդ կետը ընթերցել ի հետևյալ խմբագրությամբ՝*

26. Խորհուրդը ձևավորվում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, կառավարման մարմինների, գործատուների և հիմնադրի ներկայացուցիչներից:

4. Կանոնադրության 58-րդ կետի նախադասության մեջ նշված հեռակա և հեռավար բառերի միջև և տառի փոխարեն դնել գծիկ:

*58-րդ կետը ընթերցել ի հետևյալ խմբագրությամբ՝*

58. Համալսարանում ուսուցումն իրականացվում է առկա, հեռակա -հեռավար ձևերով:

5. Կանոնադրության VI-րդ գլխի վերնագրում, 66-րդ և 69-րդ կետերում նշված կոլեկտիվ բառը փոխարինել աշխատակազմ բառով:

*66-րդ և 69-րդ կետերը ընթերցել ի հետևյալ խմբագրությամբ՝*

66. Համալսարանի աշխատակազմի անդամները իրավունք ունեն...

69. Համալսարանի աշխատակազմի անդամները պարտավոր են...

6. Կանոնադրության 76-րդ կետի "ե" ենթակետում ինստիտուտ բառը փոխարինել համալսարան բառով:

*76-րդ կետի "ե" ենթակետը ընթերցել ի հետևյալ խմբագրությամբ՝*

ե) բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը:

7. Կանոնադրության 80-րդ կետում ավելացնել ուսանողների իրավունքների պաշտպան բառերը:

*80-րդ կետը ընթերցել ի հետևյալ խմբագրությամբ՝*

80. Համալսարանի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինները ուսանողական խորհուրդն ու ուսանողների իրավունքների պաշտպանն է, որոնք ապահովում են ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն են ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր:

Սույն փոփոխություններն ու լրացումները համարվում են կանոնադրության (նոր խմբագրությամբ՝ հաստատված 05.11.2009թ-ի հիմնադիրների խորհրդի և 02.11.2009թ-ի գիտական խորհրդի կողմից) անբաժանելի մասը և առանց նրա առ ոչինչ են:

Ռեկտոր



Ս.Օհանյան

2014թ. դեկտեմբերի 5

ք.Երևան